ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2020 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն
Ընթացակարգի ծածկագիրը **ՀՔԾ-ԳՀԱՊՁԲ-ՀԱՄ-20/1**

ՀՀ հատուկ քննչական ծառայության կարիքների համար համազգեստի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՔԾ-ԳՀԱՊՁԲ-ՀԱՄ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 24.09.2020թ. ստացված հարցադրումները և դրա վերաբերյալ 25.09.2020թ. տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1. « ՀՔԾ-ԳՀԱՊՁԲ-ՀԱՄ-20/1» ծածկագրով մրցույթի հանձնաժողովին:

Հրավերի 1-ին մասի 7.2-րդ կետի «ա» պարբերությունը սահմանում է, որ «...Եթե ըստ չափաբաժինների ներկայացված գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է 10 մլն. ՀՀ դրամը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում.»: Արդյոք տվյալ ձևակերպումից կարելի է հասկանալ, որ եթե մեր կազմակերպությունը մասնակցում է մեկ չափաբաժնին և դրա համար ներկայացնում է 10 մլն դրամից պակաս գնային առաջարկ, ապա կարող է հայտի ապահովում չներկայացնել:

Պարզաբանում N1. Ըստ վերը նշվաշ պարբերության՝ այո, եթե մեկ չափաբաժնի համար ներկայացվում է 10մլն. դրամից պակաս գնային առաջարկ, ապա կարող է հայտի ապահովում չներկայացվել:

Հարցադրում N2. Հրավերի N 6-րդ հավելվածում ներկայացված պայմանագրի 8.15-րդ կետի առկայությունը հուշում, է, որ տվյալ ընթացակարգով գնման ենթակա ապրանքների գնման համար դեռևս ֆինանսական միջոցներ նախատեսված չեն, սակայն միևնույն ժամանակ նույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցը լրացված է: Խնդրում եմ հաստատել ֆինանսական միջոցների առկայությունը կամ բացակայությունը:

Պարզաբանում N2. Սույն գնման ընթացակարգի համար ֆինանսական միջոցներ նախատեսված են և վճարումը համապատասխանում է պայմանագրի հավելված 2-ով սահմանված վճարման ժամանակացույցին:

Հարցադրում N3. Հրավերի N 6-րդ հավելվածում ներկայացված պայմանագրի N 1-ին հավելվածում ներկայացված աղյուսակի 15-րդ տողում նշված չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է՝ «Վերնաշապիկ (պոլո շապիկ)՝ կարճաթև՝ ձևով և գույնով նման է սույն հավելվածի 3-րդ կետի 7-րդ ենթակետով նկարագրված կարճաթև վերնաշապիկին՝ պոլո շապիկին (N 8 ձև, նկար 6):», սակայն տվյալ հավելվածին կից որևէ նկար և ձև առկա չէ: Բացի այդ տեխնիկական բնութագրում նշված է. «Սվիտեր կարճաթև /ՊՈԼՈ/ Շապիկը բաց երկնագույն գործվածքից է (100 տոկոս բամբակյա, 180 գր. քառ. մետր տրիկոտաժե «Պիկե»», այնուհետև՝ «Պատրաստվում է մոխրագույն 100% բամբակ, 220գր/մ2 խտությամբ կտորից»: Խնդրում եմ պարզաբանել՝ կտորի խտությունը պետք է լինի 180 գր/մ2 թե՝ 220 գր/մ2:

Պարզաբանում N3. Սույն հրավերով նախատեսված համազգեստի նկարագրությունը սահմանված է ՀՀ կառավարության 10.09.2020թ-ի N 1482-Ն որոշմամբ (նկարները տեսնել այնտեղ): Պոլո շապիկը պատրաստվում է մոխրագույն 100% բամբակ, 220գր/մ2 խտությամբ կտորից: *(Հաշվի չառնել /ՊՈԼՈ/ Շապիկը բաց երկնագույն գործվածքից է (100 տոկոս բամբակյա, 180 գր. քառ. մետր տրիկոտաժե նախադասությունը):*

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՔԾ-ԳՀԱՊՁԲ-ՀԱՄ-20/1 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Նաիրա Կարապետյանին:

Հեռախոս (011) 900-014, 900-013
Էլ. փոստ g.babayan@ccc.am